Բաժին-06 խումբ-6 դաս-1 Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպակասող)						
Աշխատանքներ /հոդված 5113/ Բակերի բարեկարգում						
45221142	Վանաձոր համայնքի թիվ 8 մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	11 683 700	1	11 683.7
Բաժին -08 խումբ -1 դաս-1 Հանգստի և սպորտի ծառայություններ						
սպորտային միջոցառումներ/հոդված 4239/						
92621110	սպորտային միջոցառումների կազմակերպում	ԷԱՃ	դրամ	9457777	1	9457,777

92621110	Համահայկական ծմեռային 2-րդ խաղերի սպորտային միջոցառման մասնակցության կազմակերպման ծառայություն	ԷԱԾ	դրամ	10977777	1	10977,777
----------	--	-----	------	----------	---	-----------

Քաժին -08 խումբ -6 դաս-1 Հանգստի, մշակույթ և կրոն

մշակութային միջոցառումներ/հոդված 4239/

79951110	մշակութային միջոցառումների կազմակերպում	ԷԱԾ	դրամ	9117777	1	9117.777
----------	---	-----	------	---------	---	----------

Քաժին -09 խումբ -1 դաս-1 Նախադպրոցական կրթություն

Աշխատանքներ/հոդված 5112/

45211228	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցման /2-րդ փուլ, ավարտում/ աշխատանքներ պետության մասնաբաժին	ՀԲՄ	դրամ	70980000	1	70980
----------	--	-----	------	----------	---	-------

45211228	Վանաձորի թիվ 4-րդ մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցման/2-րդ փուլ ավարտում/ աշխատանքների ծառայություն/պետության մասնաբաժին/	ԲՄ	դրամ	69105960	1	69105960
----------	---	----	------	----------	---	----------

Ծառայություններ /հոդված-5112/

71351540	Վանաձոր համայնքի թիվ 4 մանկապարտեզի կառուցման/2-րդ փուլ/ աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն /պետության մասնաբաժին/	ԳՀ	դրամ	579600	1	579,60
----------	--	----	------	--------	---	--------

71351540	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի մանկապարտեզի կառուցման/2-րդ փուլ/ աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն/պետության մասնաբաժին/	ԳՀ	դրամ	579600	1	579,60
----------	--	----	------	--------	---	--------

98111140	Վանաձոր համայնքի թիվ 4 մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	ՄԱ	դրամ	376252	1	376,25
----------	--	----	------	--------	---	--------

Քաժին -09 խումբ -5 դաս-1 Արտադպրոցական դաստիարակություն

Աշխատանքներ /հոդված 5113/


45611300	ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Գր. Հախինյանի անվան երաժշտական դպրոց ԿՈՒՀ» ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	44317930	1	44317.93
----------	--	----	------	----------	---	----------

Ծառայություններ /5113/

71351540	ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Գր. Հախինյանի անվան երաժշտական դպրոց ԿՈՒՀ» ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	728230	1	728.23
----------	---	----	------	--------	---	--------

*համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի

Գնումների բաժնի պետ՝



Դավիթ Հակոբյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N1064

ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ
13Ա ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-001-0268-0030 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /233172/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 13ա շենքի բակում գտնվող, 06-001-0268-0030 կադաստրային ծածկագրով, 0.00142հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Կ. Դեմիրճյան փողոց, 13/4 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N1065

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 929
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 17 ապրիլի 2025 թվականի թիվ 929 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 17 ապրիլի 2025 թվականի «Վանաձոր համայնք, գյուղ Գուգարքում ծածկագիր:06-031-0032-0006 գտնվող ինքնակամ կառուցված բնակելի տան ու հողամասի նկատմամբ Համլետ Համլետի Մամուլյանի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 929 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություն և լրացումները.

1. Որոշման վերնագիրը լրացնել «հողամասի գործառնական նշանակությունը փոխելու» բառերով:
2. Որոշման նախաբանը լրացնել «ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով,» բառերով:
3. Որոշման 1-ին կետում «112,8քմ» թվերը փոխարինել «399քմ» թվերով:
4. Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով.
«4. Փոխել Վանաձոր համայնք, գյուղ Գուգարքում գտնվող 06-031-0032-0006 կադաստրային ծածկագրով հողամասի գործառնական նշանակությունը խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N1066

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-031-0224-0001
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 13 մայիսի 2024 թվականի թիվ 25 որոշումը, <<ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ>> ԱԶ-ի կողմից 17.03.2023թ. տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով՝ ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 13 հոկտեմբերի 2005թ. թիվ 1916-Ն որոշմամբ՝ որոշում եմ.

Հաստատել Վանաձոր համայնքի գ. Գուգարքում գտնվող 06-031-0224-0001 կադաստրային ծածկագրով, 13.55940 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N1067

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 16 ԵՎ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 16-1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱՄ ԱՐՏԱՇԵՍԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արամ Արտաշեսի Սարիբեկյանի լիազորված անձ՝ Վահե Արամի Հանեյանի 15.04.2025 թվականի թիվ 02/5241 դիմումը, 25.10.2024 թվականի թիվ 676 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20241212-67-8600887), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20022025-06-0034 և թիվ 26022025-06-0025 վկայականները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, դեկլարավելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**


1. Միավորել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց 16 և Կ. Դեմիրճյան փողոց 16-1 հասցեներում գտնվող Արամ Արտաշեսի Սարիբեկյանին սեփականության իրավունքով պատկանող 0.00757 հա ընդհանուր մակերեսով հողամասերը և դրա վրա գտնվող 98.93 քմ մակերեսով խանութը՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Կ. Դեմիրճյան փողոց, 16/2 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N1068

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԲԵԼԱՌՈՒՄՆԵՐԻ 36 ՇԵՆՔԻ ԲԱԿԱՅԻՆ
ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ,
ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Կարլենի Շերմազանյանի 29.01.2024թ. թիվ 02/1834 դիմումը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 24.01.2024թ. տրված եզրակացությունը 29.12.2023 թվականի կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023SZUHZG) և 25.01.2025 թվականի կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2024VDYMRD) տեղեկանքները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Տարոն-4 Բելառուսների 36 շենքի բակային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 21.4քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 19.4քմ) կիսակառույց ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 21.4քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցները:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի

Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնական կառուցված կիսակառույց ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված կիսակառույց ավտոտնակի ինքնական կառուցումը իրականացրած անձին կիսակառույց ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Տարոն-4 Բելառուսների 36 շենքի բակային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տարոն-4 Բելառուսական թաղամաս, 36/15 կիսակառույց (ավտոտնակ):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N1069

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ-3 ԹԱՂԱՄԱՍ
ԹԻՎ 8 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարինե Սերգեյի Սարգսյանի 08.11.2023 թ. թիվ 19573 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 27.11.2023թ. թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր: 2023VE24FL), 07.02.2025 թվականի «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 13/25 ա եզրակացությունը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-3 շենքի հյուսիս-արևելյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 40.94քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 29.46քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 36.02քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված:

ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:


5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Տարոն-2 ՔՇՀ-3 շենքի հյուսիս-արևելյան մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս, 8/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N1070

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
369 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Օֆելյա Միքայելի Հովսեփյանի 19.02.2024 թվականի թիվ 02/3499 դիմումը, 20.02.2023 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 369 որոշումը, 18.04.2023 ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-18042023-06-0151 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել 20.02.2023 թվականի Վանաձորի համայնքի ղեկավարի «Վանաձոր քաղաքի Գ. Լուսավորչի թողոց թիվ 40բ և թիվ 40ո հասցեներում գտնվող, Օֆելյա Միքայելի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը որպես մեկ գույքային միավոր միավորելու, ինքնակամ կառուցված խանութն օրինականացնելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 369 որոշումը

2. Օֆելյա Միքայելի Հովսեփյանին ինքնակամ շինությունների օրինականացման և դրանցով զբաղեցրած հողամասի օտարման համար սահմանված վճարը՝ 84850 (ութսունչորս հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումարը վերադարձնել 1930043120321200 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N1071

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ
5/62 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /231266/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոց թիվ 5/62 հասցեին կից գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Ուսանողական փողոց, 5/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 07
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N1072

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ ՓՈՂՈՑ
ԹԻՎ 7/3 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Սանկտ-Պետերբուրգ փողոց թիվ 7/3 հասցեին կից գտնվող 0.006151 հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Սանկտ -Պետերբուրգի փողոց 7/5 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 07
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N1073

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 3 ՓՈՂՈՑ, 21/2Ա ՀԱՍՅԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուզաննա Աշոտի Հալաջյանի 08.04.2025թ. թիվ 02/4921 դիմումը, անշարժ գույքի սեփականության նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1926746 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնք գյուղ Գուգարք 3 փողոց, 21/2Ա հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք Քոթեջային 3-րդ փողոց, 21 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 07
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N 1074

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԴԱՐՊԱՍՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-033-0048-0011)
ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Խորեն Միշայի Ասլամազյանի, Գագիկ Միշայի Ասլամազյանի և Ռամելլա Ռուբենի Ղարիբյանի 26.03.2025 թվականի թիվ 02/4241 դիմումը, 22 ապրիլի 2025 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը, 25.03.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1515 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 741-20250320-84-8855888), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17032025-06-0068 վկայականը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 731277 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**,

Վանաձոր համայնք, գյուղ Դարպասում (ծածկագիր: 06-033-0048-0011) գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Դարպաս, 5-րդ փողոց, 20 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 07
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N1075

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱԼԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ
ՆՐՔԱՆՑՔ ԹԻՎ 12Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻՆ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լենիչկա Գրիգորի Ղազարյանի 16.04.2025 թվականի թիվ 5345
դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ
1508362 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը,
12.04.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 886
վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 863-20250327-84-8871747), ղեկավարվելով ՀՀ
կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի
29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**


Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Հալաբյան փողոց 1-ին նրբանցք, 12բ հասցեում
գտնվող կիսակառույցին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր
քաղաք, Կ. Հալաբյան փողոց, 1-ին նրբանցք, 12/2 կիսակառույց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 07
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N1076

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 43
ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ /06-001-0254-0037-ԻՑ ԿԱԴ.
ԾԱԾԿԱԳԻՐ/ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**


1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 43 շենքի հարևանությամբ գտնվող /06-001-0254-0037-ից կադ. ծածկագիր/ 0.0024 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց, 43/2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 07
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N 1077

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 58/3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ
ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՍԱԹԵՆԻԿ ԼՅՈՒԴՎԻԿԻ ՉԱՐՉՅԱՆԻ ԵՎ ԱՇՈՏ ԼՅՈՒԴՎԻԿԻ
ՉԱՐՉՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ:

Հիմք ընդունելով Սաթենիկ Լյուդվիկի Չարչյանի (ծնված 14.01.1957թ.) և Աշոտ Լյուդվիկի Չարչյանի (ծնված 07.03.2024թ.) 19/10/2023 թվականի թիվ 02/18186 դիմումը, 27.08.1990 թվականին տրված տեխնիկական անձնագիրը, 26.09.2023 թվականին տրված թիվ 5456 /նոտարական ակտի կոդ: 741-20230923-84-7317348/ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 24.05.2025 թվականի «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-59/25 Ի եզրակացությունը, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 58/3 հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 210.0 քմ և կից 132.2 քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1936-2020թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 342.2քմ:

Դեկլարավելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Սաթենիկ Լյուդվիկի Չարչյանի (1/3) և Աշոտ Լյուդվիկի Չարչյանի (2/3) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 58/3

հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտօրինական 210.0 քմ և կից 132.2 քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Սաթենիկ Լյուդվիկի Չարչյանի (1/3) և Աշոտ Լյուդվիկի Չարչյանի (2/3) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 58/3 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 342.2 քմ մակերեսով հողամասի ու դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ, բացառությամբ 2001 թ. մայիսի 15-ից հետո կառուցված (օժանդակ շինություն 10.73քմ), (շվաքարան 6.76քմ), (պարիսպ 0.16քմ) 17.65 քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինություններից:

3. Հաստատել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 58/3 հասցեում գտնվող հողամասի 0.03422 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Մոսկովյան փողոց, 58/3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N 1078

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃ 62Տ
ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շուշանիկ Օնիկի Աղաբաբյանի 10.04.2025 թվականի թիվ 5035 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1855239 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 22.08.2023 թվականի թիվ 4200 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20230822-79-7223872), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Երևանյան խճ 62տ հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Երևանյան խճուղի, 62/5 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 07
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N1079

ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 13
ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ, 06-001-0740-0020-ԻՑ
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /222119/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց, թիվ 13 շենքի հարևանությամբ գտնվող, 06-001-0740-0020-ից կադաստրային ծածկագրով, 0.002400հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Հ. Ներսիսյան փողոց, 13/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2025 թվականի N1080

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Տ. ՄԵԾԻ ՊՈՂ. ԹԻՎ 59
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ֆրունզիկ Բագրատի Չոբանյանի 01.04.2025 թվականի թիվ 4525
դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ
2005357 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը,
դեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ
հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Տ. Մեծի պող. 59 հասցեում գտնվող տարածքին
տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Տիգրան Մեծի
պողոտա, 59/6 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 07
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 մայիսի 2025 թվականի N1081

ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԹԱՂԱՄԱՍՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, 06-001-0105-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը
և 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական
պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին/գլխավոր հատակագծերի/
թիվ 7-Լ որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ
233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամասում գտնվող, 06-001-0105-
0001 կադաստրային ծածկագրով, 2.00000 հա մակերեսով հողամասին տրամադրել
փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տարոն-4 թաղամաս, 43/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 08
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 մայիսի 2025 թվականի N1082

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3-1/13-
1 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

1. Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 3-1/13-1 հասցեին կից գտնվող 0.0008 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց 10/2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 մայիսի 2025 թվականի N1083

ՄԱՐԶ ԼՈՐԻ, ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆ 6-ՐԴ ՓՈՂՈՑ 79/2
ՀԱՅՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍԻ ԿՈՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Պետրոսի Կոռյանի 01.11.2023 թվականի և 24.03.2025 թվականի դիմումները, Սամվել Պետրոսի Կոռյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25042018-06-0037 և Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05052025-06-0072 վկայականները, Վանաձոր համայնքի ավագանու 05.03.2025 թվականի ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշումը /գլխավոր հատակագիծը/, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ **որոշում եմ.**

1. Մարզ Լոռի, համայնք Վանաձոր գյուղ Շահումյան 6-րդ փողոց 79/2 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 0.32679հա մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05052025-06-0072 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 6 136 136/ վեց միլիոն մեկ հարյուր երեսունվեց հազար մեկ հարյուր երեսունվեց/ ՀՀ դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել Սամվել Պետրոսի Կոռյանին՝ հողամասի ընդլայնման նպատակով:

2. Վանաձորի համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ Սամվել Պետրոսի Կոռյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 0.32679հա մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ